

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. մարտի 25-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 33-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ն.Այվազյանին 75-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորանքներ ԵՊՀ ռեկտորի և իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից:

2. Խրախուսում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 1-ին թիմին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի և «ԷյԴիԱր Փարթներս» ընկերությամբ նախաձեռնությամբ կազմակերպված առևտրային արբիտրաժին նվիրված 4-րդ հանրապետական խաղմրցույթում հաղթելու և 2-րդ թիմին՝ 3-րդ տեղը զբաղեցնելու կապակցությամբ:

3. Քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ս.Առաքելյանին քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսորի տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

4. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյան):

5. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի հաստատում:

6. Ամբիոնների վարիչների հաղորդումները՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին:

7. 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանների հաստատում (զեկ. դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):

8. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում (զեկ. դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):

9. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ն.Այվազյանին 75-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորանքներ ԵՊՀ ռեկտորի և իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից:

ԵՊՀ ռեկտորի անունից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ն.Այվազյանին 75-րդ տարեդարձի կապակցությամբ շնորհավորանքներով հանդես եկավ ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար Մ.Սողոմոնյանը: Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անունից Ն.Այվազյանին շնորհավորանքի ջերմ խոսքեր հայտնեց դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

2. ԼՍԵՑԻՆ. Խրախուսում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 1-ին թիմին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի և «ԷյԴիԱր Փարթներս» ընկերությամբ նախաձեռնությամբ կազմակերպված առևտրային արբիտրաժին նվիրված 4-րդ հանրապետական խաղ-մրցույթում հաղթելու և 2-րդ թիմին՝ 3-րդ տեղը զբաղեցնելու կապակցությամբ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի և «ԷյԴիԱր Փարթներս» ընկերությամբ նախաձեռնությամբ կազմակերպված առևտրային արբիտրաժին նվիրված 4-րդ հանրապետական խաղ-մրցույթում հաղթելու կապակցությամբ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը շնորհակալություն հայտնեց իրավագիտության ֆակուլտետի թիմի ուսանողներ Լիլիթ Պետրոսյանին, Քրիստինե Գաբուզյանին, Արթուր Բուդուրյանին, Մարտին Ստեփանյանին, Վահագն Վարդանյանին և պարգևատրեց մասնագիտական գրականությամբ: Նույն մրցույթում 3-րդ տեղը զբաղեցնելու կապակցությամբ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը շնորհակալություն հայտնեց իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ Արփինե Առաքելյանին, Սեդա Գրիգորյանին, Լուիզա Մելիքսեթյանին, Գոհար Գրիգորյանին, Արման Ղուկասյանին և պարգևատրեց մասնագիտական գրականությամբ:

Թիմերի մարզիչ ի.գ.թ. Արսեն Թավադյանը պարգևատրվեց իրավագիտության ֆակուլտետի պատվոգրով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

3. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Ս.Առաքելյանին քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսորի տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ս. Դիրանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Սերգեյ Առաքելյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցության համար Երևանի Պետական Համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի 18-րդ կետի պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ.Ղազինյանը ներկայացրեց փակ գաղտնի քվերակության կարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսորի տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցության համար Ս.Առաքելյանի երաշխավորության հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության: Այդ կապակցությամբ խորհրդի նախագահի առաջարկով, փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար ֆակուլտետի խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ դոց. Ս.Մեղրյան, պրոֆ. Վ.Ավետիսյան, իրավագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի՝ Ս.Ղազարյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց. Ս.Մեղրյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին:

Խորհրդի նիստին ներկա են եղել դրա 42 անդամներից 33-ը, որից 31-ը մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Ս.Առաքելյանի օգտին քվեարկել է խորհրդի 31 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները,

Բ. Ս.Առաքելյանին երաշխավորել քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսորի տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցության համար:

4. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյան):

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Գաբուզյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի հաստատում:

Խորհրդի նախագահ ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը հավաստիացավ, որ բոլոր ամբիոններին ներկայացված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը ամբիոններում հատուկ քննարկվել է: Խորհրդի նախագահը նաև հանդես եկավ ծրագիրը հաստատվելու պարագայում ծրագրի կատարման ժամանակացույցի նկատմամբ հսկողություն իրականցնող աշխատանքային խումբ ստեղծելու առաջարկությամբ, որի կազմում ընդգրկվելու են խորհրդի նախագահ պրոֆ. Գ.Ղազինյանը, Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյանը, իրավագիտության ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ դոց. Ա.Մարգարյանը և գիտական խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Կ.Գևորգյանը, Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը:

6. ԼՍԵՑԻՆ. Ամբիոնների վարիչների հաղորդումները՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին:

Ամբիոնների վարիչները ներկայացրին ամփոփ հաշվետվություն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյանը մտավախություն հայտնեց 2 ավարտական աշխատանքներ և 3 մագիստրոսական թեզեր, իսկ Քրեական

դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը՝ 1 ավարտական աշխատանք սահմանված ժամկետում ավարտին հասցնելու հնարավորության կապակցությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

7. ԼՍԵՑԻՆ. 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանների հաստատում (զեկ. դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ ձևով ներկայացրեց -2017 ուսումնական տարվա ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանները:

8. ԼՍԵՑԻՆ. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում (զեկ. դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյան):

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները, ցերեկային և հեռակա ուսուցմամբ բակալավրիատում և մագիստրատուրայում, ըստ կուրսերի, առաջադիմության աստիճանը: Դեկանի տեղակալը նաև հայտնեց, որ 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 3 ուսանող հեռացվել է 2-րդ կուրսից, 1 ուսանող՝ 3-րդ կուրսից, 8 ուսանող՝ 4-րդ կուրսից և 1 ուսանող՝ մագիստրատուրա 2-րդ կուրսից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

9. Ընթացիկ հարցեր

9.1 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տաթևիկ Նահապետյանի թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տաթևիկ Նահապետյանի՝ «Դիմումի հիմքով հարուցված վարչական վարույթի առանձնահատկությունները» վերատառությամբ թեկնածուականատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.2 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Հովսեփյանի՝ «Կորպորատիվ կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.3 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արամ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը հայտնեց, որ նույնանման, այն է՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատճառված վնասը և դրա հետևանքով առաջացող պատասխանատվությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեմա արդեն հաստատվել է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում», և որ բավական վիճելի է քննարկվող ինստիտուտի ճյուղային պատկանելության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հետաձգել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արամ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը, այն լրացուցիչ քննարկման առարկա դարձնել և ներկայացնել գիտական խորհրդի հաջորդ նիստին:

9.4 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Հասմիկ Սմբատյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբրուզյանը, պրոֆ. Ս.Առաքելյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Հասմիկ Սմբատյանի՝ «Քրեական օրենքի հետադարձ ուժը. տեսական և գործնական հիմնախնդիրներ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Գաբրուզյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Գրիգոր Բեքմեզյանի՝ «Գույքի օտարման պայմանագրեր» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը հաստատելու և էլեկտրոնային հրապարակման երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոց. Գրիգոր Բեքմեզյանի՝ «Գույքի օտարման պայմանագրեր» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը շարադրված է պատշաճ գիտական մակարդակով, հաստատել այն և երաշխավորել էլեկտրոնային հրապարակման:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Քրեական իրավունքի ամբիոնի 2015-2016թթ. ուս. տարում կատարած աշխատանքների

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Քրեական իրավունքի ամբիոնի դասախոսների կողմից պատրաստվել է ՀՀ քրեական նոր օրենսդրության նախագիծը: Այդ կապակցությամբ տարբեր քննարկումներ են կազմակերպվել պրակտիկ աշխատողների մասնակցությամբ: Հանդիպումները կազմակերպվել են ՀՀ արդարադատության նախարարության և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից: Ներկայումս քննարկվում են քրեական նոր օրենսգրքի նախագծի կապակցությամբ ստացված դիտողություններն ու առաջարկությունները և նախատեսվում են հանդիպումներ շահագրգիռ կառույցների հետ: Պատրաստվել է նաև ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը, որը նույնպես քննարկվում է:

Բացի այդ, ՀՀ արդարադատության ակադեմիայում ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյանը դատավորների և դատախազների վերապատրաստման շրջանակներում դասախոսություններ է կարդացել ՀՀ քրեական նոր օրենսդրության հայեցակարգի և նախաձեռնի վերաբերյալ: Ամբիոնի դասախոս Ս. Առաքելյանը ՀՀ արդարադատության ակադեմիայում դասախոսություններ է կարդացել քննիչների վերապատրաստման դասընթացներում: Ա. Մարգարյանը դասախոսություններ է կարդացել ՀՔԾ-ում, փաստաբանների պալատում: Ամբիոնը նաև մասնագիտական կարծիք է ներկայացրել «Պրոբացիոն ծառայության մասին» օրենքի նախագծի, քրեական և քրեակատարողական օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի կապակցությամբ:

«Քրեական իրավունք և դատավարություն», ինչպես նաև «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրերում ընդգրկվել են դասընթացներ, որոնք կարող են նպաստել աշխատաշուկայի պահանջների բավարարմանը: «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրով պատրաստվում են մասնագետներ, որոնք կարող են աշխատել ՀՀ-ում ստեղծվելիք պրոբացիոն ծառայությունում: Ընդ որում, նրանցից որոշներն ընդգրկված են այդ ծառայության պիլոտաժային աշխատանքներում

(հոգեբանական թրեյնինգներ դատապարտյալ անչափահասների հետ): Նշված ծրագրի շրջանակներում արդեն ունենք շրջանավարտներ, որոնք աշխատանքի են հրավիրվել ՀՀ արդարադատության նախարարություն:

Բացի այդ, ամբիոնի ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաներն ընտրվում են նկատի ունենալով իրավակիրառ պրակտիկայի պահանջներն ու ժամանակի մարտահրավերները:

Կրթական ծրագրերի արդիականացում՝ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝

Կազմվել են քրեական իրավունքի ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացների (թվով 34 առարկա) ծրագրերը, որոնցում մեծ տեղ է հատկացվել ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությանը:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, արդեն երեք տարի է գործում է «Կրիմինալոգիա» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիրը, որը ստեղծվեց սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետների հետ համատեղ և որտեղ դասավանդվում են նշված մասնագիտություններից այնպիսի դասընթացներ, որոնք անհրաժեշտ են հանցավորության դեմ պայքարի պրակտիկ գործունեության համար:

Դասավանդման մեթոդիկայի կատարելագործում

Ամբոնում դասավանդվող գրեթե բոլոր առարկաների սեմինար ու գործնական պարապմունքներն անց են կացվում հիմնախնդիրների պրակտիկ քննարկման հիման վրա: Հիմնական ուշադրությունը դարձվում է ուսանողների մեջ իրենց տեսական գիտելիքների գործնական կիրառման ունակությունների ձևավորմանը: Այդ նպատակով պարապմունքներն անցկացվում են դատական և իրավակիրառ այլ պրակտիկայի նյութերի քննարկմամբ: Ուշադրություն է դարձվում նաև օրենսդրական բացերի ու թերությունների վեր հանմանը, ընդ որում, ուսանողներին առաջարկելով դրանք վերացնելուն ուղղված առաջարկություններ մշակել: Դասախոսությունները մեծ մասամբ իրականացվում են ակտիվ քննարկման միջոցով, երբ ուսանողները նախապես ծանոթանալով նյութին՝ դասախոսության ժամանակ քննարկում են առավել կարևոր հիմնախնդիրները:

Գիտելիքների ստուգման և գնահատման ձևերի, մեխանիզմների կատարելագործում

Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների (բացառությամբ զուտ տեսական մի քանի առարկայից) քննություններն ու ստուգումները իրականացվում են պրակտիկ խնդիրների միջոցով: Մագիստրատուրայում կիրառվում է ուսանողի հետազոտական աշխատանքի հիման վրա գնահատման մեխանիզմը, ընդ որում, այդ աշխատանքները զեկուցվում և քննարկվում են դասաժամին:

Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Ամբիոնում ստեղծվել են բակալավրիատում դասավանդվող բոլոր առարկաների դասափքերն ու ուսումնական ձեռնարկները: Պատրաստվել է քրեական իրավունքի ընդհանուր մասի խնդրագիրքը: «ՀՀ քրեական իրավունք (Ընդհանուր մաս)» և «ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս)» դասագրքերը երեք ան՝ամ վերահրատարակվել են իսկ «Իրավական վիճակագրություն» և «ՀՀ քրեակատարողական իրավունք» ուսումնական ձեռնարկները վերահրատարակվել են երկու անգամ: Մագիստրատուրայում դասավանդումը հիմնականում իրականացվում է անհրաժեշտ փրականություն, այլ, այդ թվում՝ օտարալեզու աղբյուրներ առաջարկելով, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների միջոցով: Պատրաստվել է մագիստրատուրայում դասավանդվող «Կրիմինալոգիական տեսություններ դասընթացի ուսումնական ձեռնարկը»:

Գիտահետազոտական աշխատանք

Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով. անչափահասների և երիտասարդների հանցավորություն, անչափահասների և երիտասարդների քրեական պատասխանատվության առանձնահատկություններ, հանցավորության վիկտիմոլոգիական գործոններ, բռնության մոտիվացիայով հանցա՝ործություններ, կոռուպցիա, քրեակատարողական ընթացակար՝երի կատարելագործում: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվում են գիտական հոդվածների և մենագրությունների ձևով, զեկուցվում են տարբեր գիտաժողովներում: Այս տարի ամբիոնի դասախոսները քրեական օրենսգրքի նախագծի պատրաստման աշխատանքների շրջանակներում այցելել են Ստրասբուրգ, որտեղ Եվրոպական դատարանի փորձագետների հետ քննարկվել են քրեական նոր օրենսգրքի նախագծի խնդրահարույց հարցեր: Ա. Մարգարյանը 2015 թ.

Շվեդիա այցելություն է կատարել ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում, ինչպես նաև հակակոռուպցիոն ծրագրերի փորձագետ է ԳԲԵԿՈ-յի շրջանակներում:

Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել ինը գիտական հոդված:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում ՈԻԳ աշխատանքներին: Ֆակուլտետային ՈԻԳ նիստերը անցակացվում են պատշաճ մակարդակով. ներկայացման են թույլատրվում միայն պատշաճ գիտական մակարդակով գրված աշխատանքները: Կարևոր ենք համարում նաև ուսանողներին ընդգրկել ամբիոնի կողմից իրականացվող գիտական հետազոտությունների մեջ:

Կադրերի պատրաստման բնագավառ

Ամբիոնը ունի վեց հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, մեկ առկա ուսուցմամբ ասպիրանտ և ինը հայցորդ, ովքեր աշխատում են քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի և կրիմինալոգիայի բնագավառների արդիական թեմաների վրա: Հաշվետու ժամանակահատվածում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մեկ հեռակա ուսուցմամբ ասպիրանտ և երկու հայցորդ: Ամբիոնի դոցենտ Սերգեյ Առաքելյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Ամբիոնի երկու դասախոսներ՝ Տիգրան Սիմոնյանը և Աննա Մարարյանը ավարտել են իրենց դոկտորական ատենախոսությունները և մոտ ապագայում դուրս կգան պաշտպանության:

Թերություններ ամբիոնի աշխատանքներում

Ամբիոնի աշխատանքներում կան նաև որոշ թերություններ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներով:

Մասնավորապես դեռ չի հրատարակվել քրեական իրավունք առարկայի հատուկ մասի խնդրաիրքը, կրիմինալոգիայի դասագրքերի վրա աշխատանքները դեռ չեն սկսվել: Մա հիմնականում պայմանավորված է ամբիոնի դասախոսների ծանրաբեռնվածությամբ: Թերություններ կան դասալսումների հետ կապված: Լավ կլիներ, որ ամբիոնի բոլոր դասախոսները ընդգրկվեին դրա մեջ: Այստեղ նույնպես ծանրաբեռնվածությունն է դեր կատարում:

Դեռևս անելիքներ կան մագիստրոսական թեզերի որակի բարձրացման ուղղությամբ:
Այս հարցում էական դեր է կատարում նաև գրականության սղությունը, իսկ երբեմն էլ
բացակայությունը: Պակաս կարևոր չէ նաև որոշ մագիստրոսների
պատրաստվածության ցածր մակարդակը:

Ամբիոնի վարիչ

Ա. Գաբուզյան